ՏԵՂԵԿԱՆՔ

2024 թվականի գյուղատնտեսական տարվա և իրականացված ծրագրերի վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզում 2023-2024 թվականների բերքի տակ կատարված հիմնական մշակաբույսերի ցանքային տարածությունները հետևյալն են.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածությունը (հա)		
		2023թ.	2024թ.	Տարբերությունը (+/-)
1	**Աշնանացան**	17481	13185	-4296
2	**Գարնանացան հացահատիկ**	19115	20766	+1651
3	**Հատիկաընդեղեն**	121	161	+40
4	**Տեխնիկական**	153	142	-11
5	**Կարտոֆիլ**	3569	3834	+265
6	**Բանջարեղեն**	1165	1058	-107
7	**Կերային**	9006	8568	-438

2025 թվականի բերքի տակ կատարվել է **9808.7** հա աշնանացան ցորենի ցանք։

2024 թվականին՝ համեմատած 2023 թվականի հետ, գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի միջին բերքատվությունը հետևյալն է՝

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Միջին բերք /գ/	
		2023թ.	**2024թ.**
1.	Հացահատիկ և հատիկաընդեղեն *որից՝*	22.7	19.0
1.1	*աշնանացան ցորեն*	24.8	21.4
1.2	*գարնանացան գարի*	20.6	17.0
1.3	*հատիկաընդեղեն*	19.0	14.3
2.	Կարտոֆիլ	204.8	187.6
3.	Բանջարեղեն	164.8	201.1

Շիրակի մարզում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի իրականացման 2024 թվականի արդյունքների վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի N 1612-Լ որոշմամբ հաստատված Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում 2024 թվականին 2 շահառուի տրամադրվել է ընդհանուր 19.1 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 1750 քառակուսի մետր արտադրական տարածքով ջերմատան կառուցման համար:

2. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր

Ծրագրի շրջանակում 2024 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ հաստատվել է Շիրակի մարզի շահառուների կողմից ներկայացված 2 հայտ 140.0 մլն ՀՀ դրամի չափով, կնքվել է 114 հումքի գնման պայմանագիր, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 3.4 մլն ՀՀ դրամ:

3. ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում 2024 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ հաստատվել է Շիրակի մարզի շահառուների կողմից ներկայացված 2 հայտ 6.1 մլն ՀՀ դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 61.5 մլն ՀՀ դրամ:

4. ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 327-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր

Ծրագրի շրջանակում 2024 թվականին թվով 4 շահառուի (Ողջի և Մեղրաշատ) տրամադրվել է 12 մլն ՀՀ դրամի չափով վարկ՝ 12 գլուխ ԽԵԿ-ի ձեռք բերման համար:

5. ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշմամբ հաստատված ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում 2024 թվականին ձեռք է բերվել 67 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 19 միավոր տրակտոր, լիզինգի գումարը կազմել է շուրջ 96.5 մլն ՀՀ դրամ: Ծրագրի մեկնարկից տրամադրված լիզինգի համար 2024 թվականին՝ նոյեմբերի 1-ի դրությամբ սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 37.6 մլն ՀՀ դրամ:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մարտի 14-ի N 384-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության» ծրագիր

Ծրագրի շրջանակում թվով հինգ համայնքների 1505 շահառուների կողմից իրականացված 5970,89 հա հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի և բազմամյա խոտաբույսերի ցանքերի համար տրամադրվել է փոխհատուցում՝ 430.75 մլն ՀՀ դրամ, իսկ համայքներին՝ մոնիթորինգի իրականացման համար՝ 12,9 մլն ՀՀ դրամ գումար։

7. ՀՀ Կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի 1305-Լ որոշման հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության» ծրագիր

Ծրագրի շրջանակում 2024 թվականին թվով 1 շահառուի (Մեծ Մանթաշ) տրամադրվել է 1,38 մլն ՀՀ դրամի չափով վարկ՝ 21 գլուխ ՄԵԿ-ի ձեռք բերման համար։

2024 թվականին կարկտահարության հետևանքով վնասվել է շուրջ 2117 հա ցանքատարածություն, իսկ 2023 թվականին՝ 6590 հա։ Համայնքներում ստեղծված հանձնաժողովների կողմից կատարվել է վնասված ցանքատարածությունների ուսումնասիրություն և գույքագրում, կազմվել է համապատասխան համայնքային ակտեր և ներկայացվել է մարզային հանձնաժողովի քննարկմանը, մարզային հանձնաժողովի կողմից ուսումնասիրված ակտերը մարզպետի համապատասխան գրություններով տրամադրվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը։

8. Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024-2026 թվականների ծրագիր

Խեցգետնաբուծության զարգացման պետական աջակցության մասնակցության առաջին պայմանագիրը կնքվել է ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ողջի բնակավայրում խոշոր խեցգետնաբուծական համալիր հիմնելու նպատակով։

Պայմանագրով նախատեսվում է Ողջի բնակավայրում շուրջ 300 մլն դրամի ներդրումային ծրագրով հիմնել խոշոր խեցգետնաբուծական համալիր, որը տարեկան կբուծի 18 տոննա խեցգետին։ Կատարված ներդրումային ծախսերի 50 տոկոսը կփոխհատուցվի պետության կողմից։ Ներկայումս ընթացքի մեջ են համալիրի կառուցման շինարարական աշխատանքները։

Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման 2023-2024թթ. համեմատական արդյունքները հետևյալն են.

	2023թ.	2024թ.	Աճ/նվազում (+/-)
Խ.Ե.Կ. /հազ. գլուխ/	70082	67819	**-2263**
որից՝ կովեր /հազ. գլուխ/	32356	31580	**-776**
Խոզեր /հազ. գլուխ/	13421	16685	**+3264**
Ոչխարներ և այծեր /հազ. գլուխ/	73674	78711	**+5037**
Թռչուն /հազ. թև/	379023	137457 /առանց օժանդակ տնտեսությունների/	**-241566**

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից մարզի առավել վարակված գյուղատնտեսական հողատեսքերում քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով 2023-2024 թվականներին անհատույց տրամադրվել է՝

2023 թվական		2024 թվական	
Տրամադրված թունանյութ /լիտր/	Հողատարածքը /հա/	Տրամադրված թունանյութ /լիտր/	Հողատարածքը /հա/
1929.45	24118.1	2340	29250

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ-ի «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում ըստ ժամանակացույցի իրականացվել են կենդանիների հիվանդությունների կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ՝

Բրուցելյոզ- ԽԵԿ 63924 գլուխ, ՄԵԿ 33800 գլուխ

Լեյկոզ- ԽԵԿ 1145 գլուխ

Տուբերկուլինիզացիա- ԽԵԿ 2621 գլուխ

Սիբիրախտ- ԽԵԿ 110787 գլուխ, ձի 153 գլուխ

Էմկար- ԽԵԿ 110361 գլուխ

Դաբաղ- ԽԵԿ 196213 գլուխ, ՄԵԿ 31391 գլուխ

Հանգուցային մաշկաբորբ– ԽԵԿ 25206 գլուխ

Ծաղիկ –ՄԵԿ 19652 գլուխ։

2024 թվականի ընթացքում մարզի անասնահամաճարակային վիճակը եղել է կայուն ։

2024թ. ընթացքում ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի նախաձեռնությամբ և «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ կանաչ տարածքների հիմնման աշխատանքներ են իրականացվել Գյումրի, Աշոցք, Անի, Ամասիա, Ախուրյան և Արթիկ համայնքների թվով 34 բնակավայրերում, որոնց ընդհանուր մակերեսը կազմել է մոտ 10 հա: 2024թ. ընթացքում շարունակվել է անտառապատման աշխատանքներ Մեծ Սարիար 30 հա, Գյումրի 15 հա, Բավրա 0.5 հա, Սառնաղբյուր 1.5 հա:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝
Ռ. ՀԱՄԱՅԱԿՅԱՆ